Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

08.05.2020թ. ք.Երևան

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր՝ Ա.Սուքիասյանս ուսումնասիրելով 21.10.2019թ. հարուցված թիվ 05515872, 05515865, 05515862, 05515858 և 05515734 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից «18» հոկտեմբեր 2019թ. տրված թիվ ԵԿԴ/1664/17/17 կատարողական թերթի համաձայն պետք է Ա/Ձ Նարեկ Մուրադյանից Ֆլորա Հովհաննիսյանից և Էրիկ Սարգսյանից հօգուտ հօգուտ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի բռնագանձել 6320430 ՀՀ դրամ և տոկոսներ ու տույժեր: Գումարների բռնագանձումը տարածել վարկային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով 03.10.2014թ կնքված անշարժ գույքի գրավի մասին /հիփոթեք/ թիվ 014-082Ա պայմանագրով գրավադրված Կորյուն Մուրադյանին և Սվետլանա Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող ք.Երևան, Ավան-Առինջ Բաբաջանյան փող. թիվ 7/5 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Փորձագետի կողմից տրված եզրակացության համաձայն գրավի առարկա հանդիսացող ք.Երևան, Ավան-Առինջ Բաբաջանյան փող. թիվ 7/5 հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը կազմում է 18.100.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Գրավի առարկա հանդիսացող ներքոհիշյալ անշարժ գույքը՝

Հ/Հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	Մեկնարկային գինը (75%)	գույքի քանակը
1	ք. Երևան, Ավան-Առինջ, Բաբաջանյան փող. թիվ 7/5	18.100.000 ՀՀ դրամ	13.575.000 ՀՀ դրամ	1 հատ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.achurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 29.06.2020թ.:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող Ա.Սուքիասյան

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: